

մեծ եւ փառաւոր չատըրն, թագաւորի լայելի,
 եւ անդ տարեալ դնէին զխաղնան. եւ հարիւր
 մարդ յիրմէ չի դատէր: Եւ ուխտաւորքն հե-
 40 ոու իջնուին:

Եւ այն աշխարհն այնպէս սահմանք կայ,
 որ կօմբուկ չեն ի տալ, թէ եւ ձկն զուռուչի
 ապրանք ունենայ. դէք գլխուն ու տավրէն
 կ'առնուն ամէն իրիկուն. կայ որ շահի մի,
 45 կայ փարայ, կայ ոուպ, կէս զուռուչ եւ մէկ
 զուռուչ ալ կայ. բայց իչուն քիչ է, ըզտուն,
 ձիուն աւելի. բայց խաղնին հետ դնացողաց
 մարդ խատիր չէ խօսիլ: Եւ երբ ես ալ ելայ
 Մսրայ, ասին ինձ շաքար, լիմօն, քացախ
 50 առնուլ. զի ջուր չի գտվիլ. եւ այն դառն է,
 հստած, բորբսած, պիտի շաքար խառնել,
 լիմօն, տամոն հնդի, ապա կարես ըմպել:

Իբրեւ գնացար խօնախ մի, դեռ ջուր ու-
 նէաք. եւ երկու օր ու կէսն հասար ՍԱԼԱՀԱ-
 55 ՏԻՆ. եւ անդ դեռ եւս կայր ջուրն նեղոս գե-
 տոյն՝ ի լիճս եւ ի ձորս: Եւ այս գեղս անթիւ
 ծառք խուրմայից տեսաք. այլ եւ խուրմա յո-
 լով, աժան. եւ ասին թէ աստի գնայ խուրման
 ի Մսր, Ստամպոլ եւ այլ տեղ. եւ մեք գնե-
 60 ցաք օխան իրեք դրամի, դաժա եւ ախորժ.
 տարաք մինչ յերուսաղէմ:

Եւ անտի մէկ օրն հասար ի ՀԻԼԱՍ գեղն,
 ուստի հինան կ'եղնէ, զի սար ու ձոր եւ դաշ-
 տերն ամէն հինայ է, կանաչ եարբախ որպէս
 65 հրէջքայի, եւ ցած՝ նման բանպիլի. եւ զայն

45 կա: — 46 յիչուն: — 48 ելա: — 60 յախորժ:
 — 61 նախ գրուած դաթի, վրան հիլաս: